

<ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ>

**2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ
ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ՀԱՅՏ**

1. ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Գյուղատնտեսության առջև ծառայած խնդիրների լուծման արդյունավետ միջոցներից են գյուղատնտեսությունում տնտեսավարողների վարկավորման մատչելիության բարձրացումը և վարկավորման պայմանների բարելավումը: Վերջինս հնարավորություն կընձեռնի ընդլայնել գյուղացիական տնտեսությունների կարողությունները, բարձրացնել ոլորտի մրցունակությունը, նպաստել համայնքների ամրապնդմանը, բարելավել գյուղական բնակչության կենսապայմաններն ու կյանքի որակը, բարձրացնել երկրի պարենային անվտանգության մակարդակը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-Լ որոշմամբ հավանության է արժանացել Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը: Ծրագրով վերանայվել են գործընթացի մեխանիզմները, մասնավորապես վարկերի մայր գումարը սահմանվել է 3-15 մլն դրամի սահմաններում: Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի համար վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորումն իրականացվում է այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը տնտեսավարողներին տրամադրվեն 0 % տոկոսադրույքով: Բացի այդ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով Ծրագրի շրջանակում 2020 և 2021 թվականներին վարկերը բոլոր տնտեսավարողներին հասանելի էին 0 % տոկոսադրույքով, ներառվել էր մինչև 1,0 մլն դրամ վարկերի տրամադրումը, սահմանվել էին առանձին ուղղություններով վարկերի տրամադրում՝ մինչև 50,0 մլն դրամ:

2022 թվականին ծրագրում կատարվել են փոփոխություններ՝ վարկերի գումարը սահմանվել է 3-15 մլն դրամ, վարկի մարման ժամկետը՝ մինչև 3 տարի, սահմանվել են վարկերի տրամադրման կոնկրետ նպատակային ուղղություններ՝

1. մեղվամայրերի, մեղվաընտանիքների, ինչպես նաև փեթակների ձեռքբերում,
2. անասնաշենքերի կառուցում և տեխնոլոգիական ապահովում,
3. գյուղատնտեսական կենդանիների («Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 18-րդ կետ) ձեռքբերում,
4. անասնակերի ձեռքբերում,
5. սերմերի, սածիլների և տնկիների ձեռքբերում,
6. գյուղատնտեսական նշանակության հողի ձեռքբերում,
7. հողի և գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության, ագրոտեխնիկական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ շրջանառու միջոցների և ծառայությունների ձեռքբերում,
8. տնամերձ հողամասերում ոռոգման արդիական համակարգերի ներդրում,
9. ագրովերամշակման ոլորտի արտադրական նշանակության շենքերի, շինությունների կառուցում և վերակառուցում.

Տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին, հանդիսանալով պետություն-մասնավոր հատվածների համագործակցության առավել արդյունավետ ձևերից մեկը, հնարավորություն կընձեռի դիվերսիֆիկացնել գյուղատնտեսության վարման առկա ռիսկերը 3 կողմերի՝ պետության, վարկավորող կազմակերպությունների և գյուղատնտեսությունում տնտեսավարողների միջև:

Տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման արդյունքում՝

- կբարձրանա ոլորտում վարկունակ պահանջարկի մակարդակը, ինչը կհանգեցնի համախառն արտադրանքի աճին,
- Էականորեն կնվազեն բանկերի և վարկային կազմակերպությունների ռիսկերը,
- կբարձրանա գյուղատնտեսության ոլորտի ներդրումային գրավչությունը,
- կընդլայնվեն գյուղատնտեսությունում տնտեսավարողների կարողությունները, սահմանված ժամկետում և պահանջներին համապատասխան կիրականացվեն գյուղատնտեսական մթերքների արտադրության կազմակերպման աշխատանքները, հնարավորություններ կապահովվեն ագրոտեխնիկական պահանջների կատարման, անասնապահությունում գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավման, արտադրության արդյունավետության բարձրացման համար,
- կստեղծվեն հնարավորություններ գյուղատնտեսությունում արդիական տեխնոլոգիաների ներդրման, տնտեսությունների խոշորացման, վարկառուների ռեեստրի վարման միջոցով վարկավորման առաջնահերթ խնդիրների բացահայտման համար,
- ոլորտում մասնավոր ներդրումները կավելանան տարեկան միջին հաշվով 20.0 մլրդ դրամով, որը հնարավորություն կստեղծի շահառու տնտեսավարողների տնտեսությունների կայունացման, կապիտալ ներդրումների ավելացման, ընդլայնված ծավալներով արտադրության շարունակման և արդիական տեխնոլոգիաների ներդրման համար:


Ծրագրի շրջանակում սկսած 2017 թվականի սեպտեմբերի 14-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում տրամադրվել է ընդհանուր առմամբ 81131 միավոր վարկ ավելի քան 198.6 մլրդ դրամ գումարով: Վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 18.6 մլրդ դրամ: 2017 թվականի սեպտեմբերի 14-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում տրամադրվել է 913 միավոր վարկ 4.2 մլրդ դրամ գումարով, իսկ միայն 2021 թվականի ընթացքում՝ 29487 միավոր վարկ 72.9 մլրդ դրամ գումարով և սուբսիդավորման գումարը կազմել է 9.8 մլրդ դրամ: Ծրագրի մեկնարկից տրամադրված վարկերի շուրջ 18 %-ը տրամադրվել է կանանց, իսկ միայն 2021 թվականին՝ ընդամենը վարկերի շուրջ 20 %-ը՝ 5307 միավորը տրամադրվել է կանանց:

Գյուղատնտեսական նշանակության վարելահողերի շուրջ 50%-ը ներկայումս նպատակային չի օգտագործվում: Դա պայմանավորված է մի քանի փոխկապակցված գործոններով: Այս առումով 2020 թվականին ՀՀ մարզերում իրականացված հարցման արդյունքում ի հայտ են եկել ՀՀ համայնքներում քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման պատճառները: Դրանք են՝ հողակտորների մասնատվածությունն ու փոքր չափսերը, ցածր եկամտաբերությունը, շրջանառու միջոցների անբավարարությունը, ոռոգման ջրի անհասանելիությունը կամ անբավարար մատակարարումը, գյուղատնտեսական արտադրանքի իրացման դժվարությունը, հողօգտագործողի՝ սեփականատիրոջ բացակայությունը և այլն: Մասնավորապես, 2014 թվականին իրականացված գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալներով, գյուղատնտեսական հողամասերի միջին տարածքը կազմում է 1.48 հա (սկսած 0.72 հա-ից ՀՀ Արարատի մարզում մինչև 2.54 հա ՀՀ Շիրակի մարզում) իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող տնտեսությունների համար և 62.57 հա (սկսած 18.38 հա-ից ՀՀ Արարատի մարզում մինչև 182 հա ՀՀ Արմավիրի մարզում) այդպիսի կարգավիճակ ունեցողների դեպքում: Գյուղացիական տնտեսությունների 45 տոկոսը կազմված են երեք և ավելի հողամասերից, իսկ 20 տոկոսը՝ հինգ և ավելի հողամասերից: Միաժամանակ, գործող իրավական և կազմակերպական կառուցակարգերը, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքով սահմանված կառուցակարգերը, չեն նախատեսում Կառավարության ակտիվ մասնակցություն գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման մակարդակի բարձրացմանը:

Ներկայացվող ծրագիրը նպատակ ունի ստեղծել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի կառավարման նոր գործիքներ (վարձակալության և ձեռք բերման միջնորդություն, հողերի կոնսոլիդացիա, հողերի բանկավորում և գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման մշտադիտարկում)՝ ունենալով զարգացման նպատակների ավելի լայն շրջանակ: Նշված գործիքների իրականացման համար պատասխանատու կառույց է հանդիսանալու ՀՀ Էկոնոմիկայի նախարարության համակարգմամբ ստեղծվող հողային գործակալությունը:


Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2021թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 5.8%:

Տնտեսական ակտիվության ցուցանիշ
նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, %




Արդյունաբերության թողարկման ծավալը 2021 թվականի հունվար-դեկտեմբերին 2020թ. նկատմամբ աճել է 3.3%-ով: Հանքագործական արդյունաբերության ծավալը նվազել է 0.8%-ով, մշակող արդյունաբերության ծավալն աճել է 3.4%-ով: Մշակող արդյունաբերության ծավալում առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող ենթաճյուղերից «սննդամթերքի արտադրության» ծավալն աճել է 3.8%-ով, «խմիչքների արտադրությանը»՝ 21.5%-ով, «ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների»՝ 21.5%-ով, իսկ «հագուստի արտադրությանը»՝ 25.0%-ով, «մանածագործական արտադրատեսակների արտադրությունը»՝ 1.1 անգամ, «դեղագործական արտադրատեսակներինը»՝ 2.3%-ով, «կաշի, կաշվե արտադրատեսակների արտադրությունը»՝ 50.4%-ով, «այլ ոչ մետաղական արտադրատեսակների արտադրությունը»՝ 24.0%-ով, «կահույքի արտադրությունը»՝ 20.8%-ով, «էլեկտրական սարքավորանքի արտադրությունը»՝ 6.7%-ով ի հակադրություն որոնց «ծխախոտային արտադրատեսակների արտադրության» ծավալը կրճատվել է 13.1%-ով, «հիմնական մետաղների արտադրությանը»՝ 10.5%-ով, «պատրաստի մետաղական արտադրատեսակների արտադրությունը»՝ 38.6%-ով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի աճ
նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, %




Ծառայությունների ծավալն աճել է 7.8%-ով: Ծառայությունների ծավալում առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող տեսակներից «մշակույթ, զվարճություններ և հանգիստ»՝ տեսակի ծավալը նվազել է 31.5 %-ով: Ծառայության մնացած տեսակների գծով գրանցվել է աճ: Առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող ծառայության տեսակներից «կացության և հանրային սննդի կազմակերպում» ծառայության տեսակի աճը կազմել է 60.9%, «ֆինանսական և ապահովագրական գործունեությունը»՝ 1.0%, «տեղեկատվություն և կապը»՝ 12.2%, «տրանսպորտի»՝ 28.3%-ով, «անշարժ գույքի հետ կապված գործունեությունը»՝ 25.9%-ով, «մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն»՝ 19.9%-ով, «առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկումը»՝ 45.1%-ով:

Ծառայությունների ծավալի աճ,
նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, %



Գյուղատնտեսության ծավալը 2021թ. հունվար-դեկտեմբերին նվազել է 1.1%-ով: Ենթաօլորտներից բուսաբուծության ծավալն նվազել է 3.1%-ով, իսկ անասնաբուծության ծավալն աճել է 0.8%-ով: Ձկնորսության ծավալն աճել է 3.2%-ով:



Ագրոպարենային համակարգի զարգացման քաղաքականության մեջ որպես հիմնական գերակայություններ են դրված եղել՝ գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործումը, պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը, առաջադիմական տեխնոլոգիաների ներդրումը, գյուղատնտեսության ինտենսիվացման մակարդակի բարձրացումը, բնակլիմայական ռիսկերի մեղմումն ու տնտեսավարողների եկամուտների ավելացումը:

Հայաստանի Հանրապետության ագրարային հատվածում կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը նպատակաուղղված է եղել գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը, գյուղատնտեսական ամբողջ արժեչղթայում ընդգրկված սուբյեկտների՝ գյուղացիական տնտեսությունների, կոոպերատիվների, գյուղատնտեսական մթերքներ վերամշակողների, սպասարկող ենթակառուցվածքների եկամուտների ավելացմանը և երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը:

Ագրոպարենային ոլորտի բարեփոխումներն ուղղվել են պետական աջակցության ծրագրերի իրականացմանը, հողային ռեսուրսների նպատակային օգտագործման վիճակի բարելավմանն ու հողատեսքերի խոշորացմանը, գյուղատնտեսության տնտեսավարման ձևերի զարգացմանը՝ հատկապես կոոպերացիայի խթանմանը, ոլորտում գործունեության նպաստավոր պայմանների ստեղծմամբ՝ մրցունակության բարձրացմանը, մատչելի մեխանիզմների կիրառմամբ՝ ագրոպարենային ոլորտի տեխնիկական հագեցվածության վիճակի բարելավմանը, գյուղատնտեսական մթերքների իրացման պայմանների

բարելավմանը, գյուղատնտեսությունում ամբողջական ապահովագրական համակարգի ներդրման համար նախադրյալների ստեղծմանը և ագրարային արտադրական և սպասարկման գործընթացներում արդիական մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման աջակցությանը:

ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն 2021 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը կազմել է 933 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմում է 98.9%: Ընդ որում բուսաաբուծության համախառն արտադրանքը կազմել է 469,4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել 96.9%, իսկ անասնաբուծության համախառն արտադրանքը՝ 463,5 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշին գերազանցում է 0.8 %-ով:

Բուսաբուծության ճյուղում 2020 թվականի նկատմամբ 2021 թվականին նվազել է հացահատիկի և հատիկալնդեղենի համախառն բերքի արտադրությունը՝ 37,7%-ով, բանջարեղենի արտադրությունը՝ 10.6%-ով, կարտոֆիլինը՝ 16.6%-ով, և խաղողի արտադրությունը՝ 16.3%-ով, իսկ պտղի համախառն բերքի ծավալը աճել է 17,3 %-ով: Ինչ վերաբերում է անասնաբուծության ճյուղին, ապա տարեսկզբին գրացվել է գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի աճ՝ խոշոր եղջերավորների գլխաքանակը աճել է 5.3 %-ով, ոչխարների ու այծերի՝ 8.4%-ով, իսկ խոզերինը և թռչուններինը նվազել են համապատասխանաբար 10.3% և 4.4%-ով: 2021 թվականին 2020 թվականի նկատմամբ 1,8%-ով ավել գյուղատնտեսական կենդանի և թռչուն է իրացվել սպանդի համար, ինչպես նաև 7%-ով պակաս ձու է արտադրվել: Ավելացել է կաթի արտադրությունը՝ արտադրվել է 670.6 հազար տոննա կաթ, որը 2020 թվականի նկատմամբ կազմում է 102.5 %, այսինքն ավելացել է 2,5 %-ով:

Գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերությունը հանդիսանում է գյուղատնտեսական մթերքների երաշխավորված իրացման և վերարտադրության ապահովման կարևորագույն ոլորտներից մեկը, և տնտեսության այդ ոլորտի զարգացման մակարդակը մեծապես պայմանավորում է գյուղատնտեսության զարգացումը:

Գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերությունը հանրապետության արդյունաբերության առաջատար ճյուղերից է, վերջինիս մասնաբաժինը երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) կազմում է տարեկան շուրջ 11.1%:

Գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերությունը հանրապետության արդյունաբերության առաջատար ճյուղերից է, վերջինիս տեսակարար կշիռն ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ 2021 թվականի տվյալներով կազմել է 32.9%, իսկ մշակող արդյունաբերությունում՝ 52.4%: 2021 թվականին մթերվել է շուրջ 269.5 հազար տոննա պտուղբանջարեղեն և խաղող: 2021 թվականին մթերված պտուղբանջարեղենի և խաղողի արժեքը կազմել է շուրջ 36.6 մլրդ դրամ:

Ելնելով ոլորտի առանձնահատկություններից և երկրի պարենային անվտանգության խնդիրներից՝ 2021 թվականին շարունակվել է գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականությունը հետևյալ ծրագրերի իրականացմամբ.

- գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարողներին և գյուղատնտեսական մթերքների վերամշակող սուբյեկտներին վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման և փոխհատուցման մեխանիզմների կիրառում,

- մատչելի մեխանիզմներով՝ ֆինանսական վարձակալությամբ, լիզինգով գյուղատնտեսական և ագրոպարենային ոլորտի տեխնիկական միջոցների մատակարարում,

- ժամանակակից տեխնոլոգիայով մշակվող ինտենսիվ այգեգործության, բարձրաժեք մշակաբույսերի արտադրության խթանման, ոռոգման արդիական տեխնոլոգիաների, ջրավազանների, կարկտապաշտպան ցանցերի ներդրման միջոցառումներ,

- փոխհատուցման մեխանիզմների կիրառմամբ ջերմատնային տնտեսությունների, «խելացի» անասնաշենքերի ներդրում,

- խաղողագործության և գինեգործության զարգացման միջոցառումներ,

- հողերի ագրոքիմիական հետազոտություններ և բերրիության բարձրացում,

- անասնաբուժության զարգացմանն ուղղված պետական աջակցության ծրագրերի իրականացում,

- անասնապահության ոլորտում առաջադիմական տեխնոլոգիաների ներդրում,

- գյուղատնտեսությունում ապահովագրական փորձնական ծրագրի իրականացում,

- տեղեկատվական և խորհրդատվական ոլորտի ամրապնդում և զարգացում,

- սերմերի որակի ստուգում և պետական սորտափորձարկում,

- բույսերի պաշտպանության միջոցառումներ,

- գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ հակահամաճարակային միջոցառումներ,

- տնտեսավարողներին գարնանացան և աշնանացան որոշ մշակաբույսերի սերմերի ձեռքբերման մատչելիության ապահովում,

- բնական կերհանդակների նպատակային և համակարգված օգտագործում:

Շարունակվել են իրականացվել գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդության ծրագրերը, որոնք արդյունավետության բարձրացման նպատակով պարբերաբար կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ, մասնավորապես ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 175-L որոշմամբ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ֆինանսական կառույցների կողմից ՀՀ դրամով տրամադրվող վարկերի կամ լիզինգի փաստացի տոկոսադրույքը չի գերազանցել 14%-ը և սուբսիդավորումն իրականացվել է այնպիսի չափաքանակով, որ վարկերը կամ լիզինգը տնտեսավարողներին հասանելի են եղել 0% տոկոսադրույքով: 2021 թվականի մարտի 25-ին

ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 356-L և 2020 թվականի մարտի 31-ի N 416-L որոշումներում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության N 417-L որոշումը, համաձայն որի, Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառման շրջանակում մինչև 2021 թվականի հոկտեմբերի 1-ը շարունակվել է ֆիզիկական անձանց 0% տոկոսադրույքով, մինչև 1 մլն դրամ վարկերի տրամադրման գործընթացը:

Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության` լիզինգի պետական աջակցության ծրագրի արդյունավետությունը բարելավելու նպատակով 2021 թվականին կատարված լրացումներով ծրագրի ընդգրկման շրջանակն ավելացվել է շարժական և շարժական մոդուլային սպանդանոցներով, սպանդանոցային ծառայություն մատուցողի կողմից ձեռք բերվող մսեղիքի տեղափոխման տրանսպորտային միջոցներով, ինչպես նաև տրամադրվող սարքավորումների օգտագործման ոլորտներով:

Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի գծով տնտեսավարողների մոտ ապահովման միջոցի ոչ բավարար մակարդակի դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը տրամադրվել է մինչև 50%-ի չափով բյուջետային երաշխիք, բայց ոչ ավելի, քան 2020 թվականին արտահանված արտադրանքի արժեքը:

Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, ոռոգման առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման, ոռոգման ջրի արդյունավետ օգտագործման, ինչպես նաև բարձրարժեք մշակաբույսերի մշակության խթանման նպատակով Կառավարության 2021 թվականի 3 հունիսի N 927-L որոշմամբ հաստատվել է ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների ծրագիրը, որում միավորվել են Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման և Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագրերը` հաշվի առնելով, որ կարկտապաշտպան ցանցերը և ոռոգման կաթիլային համակարգերը որպես կանոն ներդրվում են այգեգործության բնագավառում (գործող ծրագրերի շրջանակում կարկտապաշտպան ցանցերն ամբողջությամբ, իսկ ոռոգման արդիական համակարգերի շուրջ 90%-ը ներդրվել են այգիներում): Նախագծում ներառվել է նաև ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի մշակման և ջրավազանների կառուցման համար անհրաժեշտ

մատչելի ֆինանսական ռեսուրսների ձեռքբերման հնարավորությունը, ինչպես նաև ճշգրտվել են գործող ծրագրերում 1 հա-ի վրա կատարվող ծախսերը, սահմանվել են նախագծի շրջանակում թույլատրելի տարածքների նվազագույն և առավելագույն սահմանաչափերը, հստակեցվել է անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և բովանդակությունը:

2021 թվականին շարունակվել է գյուղատնտեսության ապահովագրության պետական աջակցության ծրագիրը, որի շրջանակում 2021 գյուղատնտեսական տարվա համար ապահովագրվող մշակաբույսերի ցանկը և ծրագիրն ընդգրկող մարզերի շրջանակն ընդլայնվել է՝ ներառելով կարտոֆիլ, սալոր, ձմերուկ/սեխ մշակաբույսերը:

Հանրապետությունում գարնանացան հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային որոշ մշակաբույսերի, աշնանացան ցորենի սերմերի գնի մասնակի սուբսիդավորման կամ փոխհատուցման միջոցով ռազմական և արտակարգ դրության հետևանքների՝ մասնավորապես օգտագործվող արոտավայրերի կրճատման արդյունքում անասնակերի ապահովման խնդիրների մեղմման, պարենամթերքի ինքնաբավության մակարդակի բարձրացման և տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացման նպատակով իրականացվել է աշնանացան ցորենի և գարնանացան հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային որոշ մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության ծրագրեր:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը ընթացիկ գներով և համախառն արտադրանքի աճը 2016-2021թթ. համար ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2016-2021թթ.¹

Տարի	Բուսաբուծություն	Անասնաբուծություն	Գյուղատնտեսություն
	Համախառն արտադրանքը, մլրդ դրամ	Համախառն արտադրանքը, մլրդ դրամ	Համախառն արտադրանքը, մլրդ դրամ
2016	519	389	908
2017	468	438	907
2018	412	478	890
2019	410.4	442.4	852.8
2020	383.8	435.5	819.3
2021	469,4	463,6	933

¹ ՀՀ ԱՎԾ հրապարակումներ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020-2021թթ. հոկտեմբեր-դեկտեմբերին, Երևան 2022, էջ 22:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը հաշվարկվում է անասնաբուծության և բուսաբուծության արտադրանքի հանրագումարով:

2021թ. տվյալներով գյուղատնտեսության համախառն արտադրանքի 50.3%-ը բաժին է ընկնում բուսաբուծության ճյուղին, իսկ 49.7%-ը՝ անասնաբուծությանը:

Գյուղատնտեսական մշակաբույսերի տարածքները և համախառն արտադրանքի ցուցանիշները 2016-2021թթ. ներկայացված են 2-րդ և 3-րդ աղյուսակներում:

Աղյուսակ 2

Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունները²
(հազ. հա)

Գյուղատնտեսական և դաշտային մշակաբույսերը	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2021թ. 2020թ. նկատմամբ, %
Հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսեր	198.1	155.2	130.2	121.4	121.5	124.8	102.7
Կարտոֆիլ	28.9	25.3	22.1	20.4	20.5	20	97.9
Բանջարեղեն	30.2	28.3	21.6	20.6	21.0	19.2	91.3
Բոստանային մշակաբույսեր	7.3	6.8	4.6	4.2	3.9	4.5	113.3
Կերային մշակաբույսեր	85.6	74.1	61.7	58.6	53.6	55.6	103.7
Տեխնիկական մշակաբույսեր	3.2	2.5	2.1	1.6	1.4	1.3	98.8
Ընդամենը	353.4	294.0	242.3	226.8	221.9	225.6	101.8

Աղյուսակ 3

Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի արտադրության ծավալները³
(հազ.տոննա)

Բուսաբուծական և հիմնական մթերքները	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2021թ. 2020թ. նկատմամբ, %
Հացահատիկային և հատիկաընդե- ղենային մշակա- բույսեր	604.2	302.4	337.6	198.7	243.0	153.2	62.3

² ՀՀ ԱՎԾ հրապարակումներ, Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2021 թվականին, Երևան 2021, էջ 8-13, 2021 թվականի բերքի տակ կատարված գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերի համատարած հաշվառման հանրագումարները, էջ 10-11:

³ ՀՀ ԱՎԾ հրապարակումներ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021թ. հունվար-դեկտեմբերին, Երևան 2022, էջ 24-25:

Կարտոֆիլ	606.3	547.4	413.1	404.1	427.3	364.6	83.4
Բանջարեղեն	968.6	861.0	529.2	621.6	650.7	619.4	89.4
Բուստանային մշակաբույսեր	236.1	215.8	126.7	128.0	119.5	131.8	104.1
Պտուղ	242.6	361.6	343.4	289.8	254.9	322.9	117.7
Խաղող	178.8	209.9	179.6	217.4	264.8	237.0	83.7

Գյուղատնտեսական հիմնական կենդանիների գլխաքանակի փոփոխությունը 2016-2021թթ. ներկայացված է 4-րդ աղյուսակում:

Աղյուսակ 4

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը⁴

(հազ. գլուխ)

Գյուղատնտեսական կենդանիներ	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2020թ. 2019թ. նկատմամբ %
Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	701.5	655.8	590.6	571.8	579.3	613.4	105.9
այդ թվում՝ կովեր	318.6	296.0	266.8	253.9	251.7	265.8	105.6
Խոզերի գլխաքանակը	174.7	175.5	166.8	197.8	223.2	200.2	89.7
Ոչխարների և այծերի գլխաքանակը	778.1	727.1	660.1	638.2	662.5	693.4	108.4
Թռչունների գլխաքանակը	3942.8	3814.2	4406.4	4152.0	4568.1	4203.7	95.6

Անասնապահական հիմնական մթերքներից 2020 թվականին նախորդ տարվա նկատմամբ նկատվում է մսի և կաթի արտադրության ծավալների աճ:

Անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալները ներկայացված են 5-րդ աղյուսակում:

Աղյուսակ 5

Անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալները⁵

⁴ ՀՀ ԱՎԾ հրապարակումներ, Գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման հանրագումարները 2021թ. հունվարի 1-ի դրությամբ, Երևան 2021թ., էջ 5-6, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 23:

Անասնապահ ական հիմնական մթերքները	Չափի միավոր ը	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2021թ. 2020թ. նկատ., %
Միս (կենդանի քաշով)	հազ.տ	187.1	192.5	190.3	188.8	189.6	193.1	101.8
Կաթ	հազ.տ	754.2	758.2	697.7	695.7	654.3	670.6	102.5
Ձուլ	մլն հատ	694.6	683	726.8	720.6	754.6	701.9	93.0

Գործող վերամշակող ընկերությունների կայուն գործունեության արդյունքում բարելավվել է գյուղատնտեսական մթերքների իրացման վիճակը:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող ծրագրերի և դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումների նկարագրությունների, հատկացված ֆինանսավորման գումարների, ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշների և թիրախավորված վերջնարդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը տես՝ Հավելված 3, իսկ իրականացվող նոր նախաձեռնությունների մասով տեղեկատվությունը՝ տես Հավելված 3-րդ:

Հավելված N 2. Նոր նախաձեռնությունների ներկայացման ձևաչափ

1. Պետական մարմինը					
1.1 Պետական մարմնի անվանումը՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն					
1.2 Նոր նախաձեռնության անվանումը՝ _____					
2. Ծրագիրը					
2.1 Ծրագրի անվանումը՝ Գյուղատնտեսության խթանման ծրագիր					
2.2 Ծրագրի կոդը՝ 1022					
2.3 Նոր ծրագիր (հիմնավորումներ և բացառություններ)՝ _____					
3. Միջոցառումը					
3.1 Միջոցառման անվանումը՝ Գյուղատնտեսական նշանակության հողերի խոշորացում՝ դրանց ձեռք բերման և վարձակալության միջնորդավորման, բանկավորման և կոնսոլիդացման միջոցով:					
3.2 Միջոցառման կոդը՝ 11004					
3.3 Միջոցառման (պետության միջամտության տեսակը)՝					
<input type="checkbox"/> Արտադրության և ծառայություն <input type="checkbox"/> Տրանսպորտ <input type="checkbox"/> Այլ (նկարագրություն)					
3.4 <input type="checkbox"/> Նոր միջոցառում (հիմնավորումներ և բացառություններ)՝ միջոցառումը հնարավորություն կտա կարգավորելու գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործման՝ հողերի բանկավորման, կոնսոլիդացիայի և վարձակալության խթանման միջոցառումները՝ հիմնական շեշտը դնելով լքված հողերի գյուղատնտեսական շրջանառության մեջ ընդգրկելու վրա:					
<input type="checkbox"/> Գոյություն ունեցող միջոցառման ընդլայնում (հիմնավորումներ և բացառություններ)՝					
3.5 Նոր նախաձեռնության ծախսերի հիմքում դրված պարտավորության բնույթը՝					
<input type="checkbox"/> Պարտադիր ծախսային պարտավորություն <input type="checkbox"/> Հայեցողական ծախսային պարտավորություն, այդ թվում՝ <input type="checkbox"/> Շարունակական <input type="checkbox"/> Ոչ շարունակական					
Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը		Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները		Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը	
Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2021 թվականից ստեղծել հողային գործակալություն, որն իրականացնելու է հողերի բանկավորման, կոնսոլիդացիայի և վարձակալության խթանման միջոցառումներ:				ՀՀ գյուղատնտեսության ոլորտում տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությանը: ՀՀ կառավարության 2020 թվականի հունվարի 23-ի N 68-Ի որոշում, 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա:	
4. Նպատակը					
Միջոցառման նպատակն է նպաստել կայուն գյուղատնտեսության և գյուղական բնակավայրերի զարգացմանը:					
5. Նկարագրությունը					
Գյուղատնտեսական նշանակության հողերի խոշորացում՝ դրանց ձեռք բերման և վարձակալության միջնորդավորման, բանկավորման և կոնսոլիդացման միջոցով:					
6. Սպասվող օգուտները					
Համախառն բերքի ավելացում, կոնսոլիդացված տարածքներում մեքենաների և աշխատուժի կրճատում, չօգտագործված տարածքների գյուղատնտեսական շրջանառության մեջ ներգրավում:					
7. Նոր նախաձեռնությունը չֆինանսավորելու դեպքում ծագող խնդիրները					
8. Արդյունքային ցուցանիշները					
	Ծախի միավորը	2023թ.	2024թ.	2025թ.	2030թ.
Չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերը շրջանառության մեջ ներառում	հա	5000	7500	10000	
9. Պահանջվող ռեսուրսները					
	ՀՀ դրամ	2023թ.	2024թ.	2025թ.	2030թ.
	X				
	X				
	X				
10. Ֆինանսավորման աղբյուրը					
	ՀՀ դրամ	2023թ.	2024թ.	2025թ.	2030թ.
Պետական բյուջե	X	470,571.99	616,666.99	866,914.99	
Այլ աղբյուրներ	X	X	X	X	X

	X			
	X			
Ընդամենը պետական բյուջեի և այլ աղբյուրների գծով	X	470,571.99	616,666.99	866,914.99
11. Արդյունքների այլ մակարդակներ արտահայտող այլընտրանքներ				
12. Նոր նախաձեռնության իրականացման այլ եղանակներ արտահայտող այլընտրանքներ				
13. Այլ անհրաժեշտ տեղեկատվություն և հիմնավորումներ				

1. Պետական մարմինը

1.1 Պետական մարմնի անվանումը՝ ԳՀ Էկոնոմիկայի նախարարություն

1.2 Նոր նախաձեռնության անվանումը՝ _____

2. Ծրագիրը

2.1 Ծրագրի անվանումը՝ Գյուղատնտեսության խթանման ծրագիր

2.2 Ծրագրի կոդը՝ 1022

2.3 Նոր ծրագիր (հիմնավորումներ և բացառություններ)՝ _____

3. Միջոցառումը

3.1 Միջոցառման անվանումը՝ ԳՀ-ում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորմանը (կոնսոլիդացիային) աջակցություն

3.2 Միջոցառման կոդը՝ 12010

3.3 Միջոցառման (պետության միջամտության տեսակը)՝

Ապրանք և ծառայություն Տրանսֆերտ Այլ (նկարագրություն)

3.4 Նոր միջոցառում (հիմնավորումներ և բացառություններ)՝ միջոցառումը հնարավորություն կստեղծի հանրապետությունում հողերի մասնավաճառության մակարդակի կրճատման, արտադրողականության բարձրացման, բերրիության պահպանման ու բարձրացման, կապիտալ ներդրումների ներգրավման համար:

Գոյություն ունեցող միջոցառման ընդլայնում (հիմնավորումներ և բացառություններ)՝

3.5 Նոր նախաձեռնության ծախսերի հիմքում դրված պարտավորության բնույթը՝

Պարտադիր ծախսային պարտավորություն

Հայեցողական ծախսային պարտավորություն, այդ թվում՝

Ընդունակական Ոչ շարունակական

Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը
Միջոցառումն իրականացվելու է ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման ծախսերի փոխհատուցման միջոցով՝ Ծրագրի շահառուի և նախարարության միջև կնքվող փոխհատուցման պայմանագրի հիման վրա:		ԳՀ գյուղատնտեսության ոլորտում տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունը: ԳՀ կառավարության 2020 թվականի հունվարի 23-ի N 68-Ի որոշում: 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Ի որոշում: 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հաստատելու մասին» N 1363-Վ որոշում:

4. Նպատակը

Միջոցառման նպատակն է նպաստել կայուն գյուղատնտեսության և գյուղական բնակավայրերի զարգացմանը:

5. Նկարագրությունը

Գյուղատնտեսական նշանակության հողերի միավորում՝ պետական աջակցության միջոցով:

6. Մասնավոր օգուտները

Մասնավաճառության և չօգտագործման մակարդակի նվազեցում, համախառն արտադրանքի ավելացում, գյուղատնտեսական նշանակության հողերի բերրիության բարձրացում, ջրավազաններով ապահովված ոռոգելի հողատարածությունների ավելացում, ծրագրի մասնակից տնտեսավարողների եկամուտների ավելացում, վճարունակության բարձրացում, հողերի շուկայի զարգացում

7. Նոր նախաձեռնությունը չֆինանսավորելու դեպքում ծագող խնդիրները

8. Արդյունքային ցուցանիշները	Ծափի միավորը	2023թ.	2024թ.	2025թ.	2030թ.
Երազրի շրջանակներում միավորված և շրջանառության մեջ ներառված գյուղատնտեսական և շահակության հողեր, հեկտար	հա	1,000	1,500	2,000	
9. Պահանջվող ռեսուրսները	Չազ. դրամ	2023թ.	2024թ.	2025թ.	2030թ.
	X	2,760,000.0	4,140,000.0	5,520,000.0	
	X				
	X				
10. Ֆինանսավորման աղբյուրը	Չազ դրամ	2023թ.	2024թ.	2025թ.	2030թ.
Պետական բյուջե	X	2,760,000.00	4,140,000.00	5,520,000.00	
Վճլ աղբյուրներ	X	X	X	X	X
	X				
	X				
Ընդամենը պետական բյուջեի և այլ աղբյուրների գծով	X	2,760,000.00	4,140,000.00	5,520,000.00	
11. Արդյունքների այլ մակարդակներ արտահայտող այլ ընտրանքներ					
12. Նոր նախաձեռնության իրականացման այլ եղանակներ արտահայտող այլ ընտրանքներ					
13. Վճլ անհրաժեշտ տեղեկատվություն և հիմնավորումներ					

1. Պետական մարմինը

1.1 Պետական մարմնի անվանումը՝ ԳՅ Էկոնոմիկայի նախարարություն

1.2 Նոր նախաձեռնությանն առնչվող այլ պետական մարմինների անվանումները՝ _____

2. Երազրի

2.1 Երազրի անվանումը՝ Գյուղատնտեսության իթանման ծրագիր

2.2 Երազրի կոդը՝ 1022

2.3 Նոր ծրագիր (հիմնավորումներ և բացառություններ)՝ _____

3. Միջոցառումը

3.1 Անասնաբուծության չյուղում ներդրումային ծրագրերի շրջանակում տնտեսավարողներին տրամադրվող աջակցություն

3.2 Միջոցառման կոդը՝

3.3 Միջոցառման (պետության միջամտության տեսակը)՝

Ապրանք և ծառայություն Տրանսֆերտ Վճլ (նկարագրություն)

3.4 Նոր միջոցառում (հիմնավորումներ և բացառություններ)՝ նպաստել չյուղում կատարվող ներդրումների ավելացմանը, անասնաբուծական արտադրանքի ինքնաբավության մակարդակի բարձրացմանը, տեղական արտադրության իթանմանը, չյուղի գրավչության մակարդակի բարձրացմանը:

Գոյություն ունեցող միջոցառման ընդլայնում (հիմնավորումներ և բացառություններ)՝

3.5 Նոր նախաձեռնության ծախսերի հիմքում դրված պարտավորության բնույթը՝

Պարտադիր ծախսային պարտավորություն Հայեցողական ծախսային պարտավորություն, այդ թվում՝ Շարունակական Ոչ շարունակական

Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը
Անասնաբուծության չյուղում իրականացվող առնվազն 8-10 մլրդ դրամի ներդրումների 35%, բայց ոչ ավելի քան 2,8-3,5 մլրդ դրամի փոխառուցում		ԳՅ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ղ որոշում ԳՅ կառավարության 19.12.2019թ. N 1886-Ի որոշում ԳՅ կառավարության 03.03.2022թ. N 276-Ի որոշում

4. Նպատակը

հանրապետությունում տեղական անասնաբուծական արտադրանքի արտադրության ծավալների ավելացման համար կատարվող ներդրումների մասնակի փոխառուցման միջոցով՝ նպաստել չյուղում կատարվող ներդրումների ավելացմանը, անասնաբուծական արտադրանքի ինքնաբավության մակարդակի բարձրացմանը, տեղական արտադրության իթանմանը, չյուղի գրավչության մակարդակի բարձրացմանը:

5. Նկարագրությունը

33 բոլոր մարզերում անասնաբուծության ճյուղում իրականացվող առնվազն 8-10 մլրդ դրամի ներդրումների մասնակի փոխհատուցում

6. Սպասվող օգուտները

Հանրապետությունում խոշոր և արդիական անասնաբուծական համալիրների առկայության ապահովում, անասնաբուծական թարմ և վերամշակված արտադրանքի ծավալների ավելացում, տավարի, խոզի և թռչնի մսի, կաթի ինքնաբավության մակարդակի բարձրացում, կաթի որակական հատկանիշների բարելավում, նոր լրացուցիչ աշխատանքների ստեղծում:

7. Նոր նախաձեռնությունը չֆինանսավորելու դեպքում ծագող խնդիրները

8. Արդյունքային ցուցանիշները	Ծափի միավորը	2023թ.	2024թ.	2025թ.	2030թ.
Ծրագրի շրջանակում 2022 թվականից իրականացվող ներդրումային ծրագրեր, հատ	հատ	5	5	5	
9. Պահանջվող ռեսուրսները	Հազ. դրամ	2023թ.	2024թ.	2025թ.	2030թ.
	X				
	X				
	X				
10. Ֆինանսավորման աղբյուրը	Հազ. դրամ	2023թ.	2024թ.	2025թ.	2030թ.
Պետական բյուջե	X	3,500,000,000.0	3,500,000,000.0	3,500,000,000.0	
Վլլ աղբյուրներ	X	X	X	X	X
	X				
	X				
Ընդամենը պետական բյուջեի և այլ աղբյուրների	X	3,500,000,000.0	3,500,000,000.0	3,500,000,000.0	0.0

11. Արդյունքների այլ մակարդակներ արտահայտող այլ ընտրանքներ

12. Նոր նախաձեռնության իրականացման այլ եղանակներ արտահայտող այլ ընտրանքներ

13. Վլլ անհրաժեշտ տեղեկատվություն և հիմնավորումներ

1. Պետական մարմինը

1.1 Պետական մարմնի անվանումը՝ 33 Եկոնոմիկայի նախարարություն

1.2 Նոր նախաձեռնությանն առնչվող այլ պետական մարմինների անվանումները՝ _____

2. Ծրագիրը

2.1 Ծրագրի անվանումը՝ Գյուղատնտեսության խթանման ծրագիր

2.2 Ծրագրի կոդը՝ 1022

2.3 Նոր ծրագիր (հիմնավորումներ և բացառություններ)՝ _____

3. Միջոցառումը

3.1 Միջոցառման անվանումը՝ 33-ում գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով հողային բանկի ստեղծում

3.2 Միջոցառման կոդը՝ 31001

3.3 Միջոցառման (պետության միջամտության տեսակը)՝

Ապրանք և ծառայություն Տրանսֆերտ Վլլ (նկարագրություն) Վլլ պետական կազմակերպությունների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ

3.4 Նոր միջոցառում (հիմնավորումներ և բացառություններ)՝ նպատակ գյուղատնտեսության զարգացմանը՝ գյուղատնտեսական նշանակության հողերի չօգտագործման մակարդակի կրճատման, օգտագործման արդյունավետության բարձրացման, մասնատվածության մակարդակի նվազեցման, հողերի շուկայի զարգացման միջոցով:

Գոյություն ունեցող միջոցառման ընդլայնում (հիմնավորումներ և բացառություններ)՝ _____

3.5 Նոր նախաձեռնության ծախսերի հիմքում դրված պարտավորության բնույթը՝

Պարտադիր ծախսային պարտավորություն
 Հայեցողական ծախսային պարտավորություն, այդ թվում՝
 Հարունակական Ոչ շարունակական

Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը
Հողային գործակալությունը կարող է ձեռք բերել գյուղատնտեսական նշանակության հողեր, վաճառել վարձակալությամբ դրամադրել:		33 գյուղատնտեսության ոլորտում տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությանը: 33 կառավարության 2020 թվականի հունվարի 23-ի N 68-Ի որոշում:

4. Նպատակը

Գյուղատնտեսական նշանակության հողերի չօգտագործման մակարդակի կրճատում, մասնատվածության մակարդակի նվազեցում:

5. Նկարագրությունը

Գյուղատնտեսական նշանակության հողերի խոշորացում՝ դրանց ձեռք բերման և վարձակալության միջնորդավորման, բանկավորման և կոնսոլիդացման միջոցով:

6. Սպասվող օգուտները

Միջոցառումը կնպաստի գյուղատնտեսական նշանակության հողերի շրջանառության մեջ ընդգրկմանը, հողօգտագործման արդյունավետության բարձրացմանը և հողերի շուկայի զարգացմանը:

7. Նոր նախաձեռնությունը չֆինանսավորելու դեպքում ծագող խնդիրները

Փոքր հողատերեր, տնտեսապես ոչ արդյունավետ գյուղատնտեսություն

8. Արդյունքային ցուցանիշները	Չափի միավորը	2023թ.	2024թ.	2025թ.	2030թ.
Օ»են ք»նիáĎ ÑáĎ»ñÁ	հա	1,000	1,500	2,250	
9. Պահանջվող ռեսուրսները	Հազ. դրամ	2023թ.	2024թ.	2025թ.	2030թ.
	X	2,198,049.0	3,165,895.0	4,740,924.0	
	X				
	X				
10. Ֆինանսավորման աղբյուրը	Հազ. դրամ	2023թ.	2024թ.	2025թ.	2030թ.
Պետական բյուջե	X	2,198,049.0	3,165,895.0	4,740,924.0	
ՎՃԼ աղբյուրներ	X	X	X	X	X
	X				
	X				
Ընդամենը պետական բյուջեի և ՎՃԼ աղբյուրների գծով	X	2,198,049.0	3,165,895.0	4,740,924.0	

11. Արդյունքների այլ մակարդակներ արտահայտող այլ ընտրանքներ

12. Նոր նախաձեռնության իրականացման այլ եղանակներ արտահայտող այլ ընտրանքներ

1. Պետական մարմինը

1.1 Պետական մարմնի անվանումը՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն

1.2 Նոր նախաձեռնությանն առնչվող այլ պետական մարմինների անվանումները՝

2. Ծրագիրը

2.1 Ծրագրի անվանումը՝ Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր

2.2 Ծրագրի կոդը՝ 1187

2.3 Նոր ծրագիր (հիմնավորումներ և բացառություններ)՝ _____

3. Միջոցառումը

3.1 Տեսաներձ հողամասերում ինտենսիվ ալգեհիմսման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման փորձնական ծրագրին աջակցություն

3.2 Միջոցառման կոդը՝

3.3 Միջոցառման (պետության միջամտության տեսակը)՝

Ապրանք և ծառայություն Տրանսֆերտ ՎՃԼ (նկարագրություն)

3.4 Նոր միջոցառում (հիմնավորումներ և բացառություններ)՝ նպաստել չորհուսման կատարվող ներդրումների ավելացմանը, անասնաբուժական արտադրանքի ինքնաբավության մակարդակի բարձրացմանը, տեղական արտադրության խթանմանը, չորհուսման գրավչության մակարդակի բարձրացմանը:

Գոյություն ունեցող միջոցառման ընդլայնում (հիմնավորումներ և բացառություններ)՝

3.5 Նոր նախաձեռնության ծախսերի հիմքում դրված պարտավորության բնույթը՝

Պարտադիր ծախսային պարտավորություն Հայեցողական ծախսային պարտավորություն, այդ թվում՝ Ընտրանական Ոչ ընտրանական

Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը
---	---	--

<p>Տնամերձ հողամասում այգեհիմնման և ոռոգման կաթիլային համակարգի ներդրման համար կատարված փաստացի ծախսերի, ինչպես նաև այգեհիմնման համար խորհրդատվական ծառայությունների տրամադրման մեկ տարվա ծախսերի ամբողջական փոխհատուցում՝ բայց ոչ ավելի քան ծրագրով հաշվարկված ծախսերի հանրագումարի չափը</p>		<p>ՀՀ կառավարության 18.08.2021թ. N 1363-Ղ որոշում ՀՀ կառավարության 19.12.2019թ. N 1886-Լ որոշում ՀՀ կառավարության ...</p>
---	--	---

4. Նպատակը

Տնամերձ հողամասերում ինտենսիվ այգեհիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման փորձնական ծրագրի նպատակն է փոխարինել տնամերձ հողամասերում առկա ծերացած ու չպտղաբերող պտղատու ծառերը նորերով և իրականացնել ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրմամբ այգետնկում:

5. Նկարագրությունը

Տնամերձ հողամասում այգեհիմնման և ոռոգման կաթիլային համակարգի ներդրման համար կատարված ծախսերի փոխհատուցում

6. Սպասվող օգուտները

Ցածր բերքատու ավանդական այգիների փոխարեն բնակավայրերում մեկ պտղատեսակով ինտենսիվ այգեհիմնման դեպքում կարտադրվի որակյալ և մրցունակ արտադրանք, ինչը կնպաստի իրացման ինդիկսների լուծմանը, սնտեսավարողների եկամուտների ավելացմանը:

7. Նոր նախաձեռնությունը չֆինանսավորելու դեպքում ծագող խնդիրները

8. Արդյունքային ցուցանիշները	Գափի միավորը	2023թ.	2024թ.	2025թ.	2030թ.
------------------------------	--------------	--------	--------	--------	--------

Ծրագրի շրջանակում ինտենսիվ այգիներով և կաթիլային ոռոգման համակարգերով ներդրվող տնամերձ հողամասեր	հա	100			

9. Պահանջվող ռեսուրսները

ՀՀ դրամ	2023թ.	2024թ.	2025թ.	2030թ.
X				
X				
X				

10. Ֆինանսավորման աղբյուրը

ՀՀ դրամ	2023թ.	2024թ.	2025թ.	2030թ.
Պետական բյուջե	X	2,326,363,200.0		
Վճլ աղբյուրներ	X	X	X	X
	X			
	X			
Ընդամենը պետական բյուջեի և այլ աղբյուրների գծով	X	2,326,363,200.0	0.0	0.0

11. Արդյունքների այլ մակարդակներ արտահայտող այլ ընտրանքներ

12. Նոր նախաձեռնության իրականացման այլ եղանակներ արտահայտող այլ ընտրանքներ

13. Վճլ անհրաժեշտ տեղեկատվություն և հիմնավորումներ

1. Պետական մարմինը

1.1 Պետական մարմնի անվանումը՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն

1.2 Նոր նախաձեռնությանն առնչվող այլ պետական մարմինների անվանումները՝

2. Ծրագիրը

2.1 Ծրագրի անվանումը՝ Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը

2.2 Ծրագրի կոդը՝ 1104

2.3 Նոր ծրագիր (հիմնավորումներ և բացառություններ)

3. Միջոցառումը՝ Տնտեսության զարգացմանն աջակցող մասնագիտական կարողությունների և հմտությունների զանգվածային վերազինման նպատակով ազգային կրթական Edtech հարթակի ստեղծմանը պետական աջակցություն

3.1 Տնտեսության զարգացմանն աջակցող մասնագիտական կարողությունների և հմտությունների զանգվածային վերազինում՝ աշխարհի առաջատար բուհերի և միջազգային կազմակերպությունների էլեկտրոնային դասընթացների միջոցով

3.2 Միջոցառման կոդը՝ 11002

3.3 Միջոցառման (պետության միջամտության տեսակը)՝ Ֆինանսավորում պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ միջոցներից:

X Ապրանք և ծառայություն Տրանսֆերտ Այլ (նկարագրություն)

3.4 V Նոր միջոցառման (հիմնավորումներ և բացառություններ)՝ Միջոցառումն ուղղված է մասնավոր, այդ թվում նաև ՓՄՁ հատվածի մասնագիտական կարողությունների զարգացման համար ազգային EdTech պլատֆորմի ստեղծում՝ մասնագիտական վերապատրաստումներ լայն մարզային բաշխվածությամբ:

Պոլոյություն ունեցող միջոցառման ընդլայնում (հիմնավորումներ և բացառություններ)՝

3.5 Նոր նախաձեռնության ծախսերի հիմքում դրված պարտավորության բնույթը՝

Պարտադիր ծախսային պարտավորություն Յայեցողական ծախսային պարտավորություն, այդ թվում՝ Շարունակական Ոչ շարունակական

Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը
<p>ՅՅ կառավարության Օգոստոսի 27-ին հաստատված է Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունը, ինչպես նաև ՅՅ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Ի որոշման հավելված N 1-ով նախատեսված՝ ՓՄՁ ծրագրի 4.2 կետի "Մասնավոր հատվածի մասնագիտական կարողությունների զարգացում" միջոցառումը:</p>		<p>Օրենսդրական հիմքերը սահմանված են ՅՅ կառավարության 2021-2026 թթ. ծրագրով: ՅՅ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Ի որոշման հավելված N 1-ով նախատեսված՝ ՓՄՁ ծրագրի 4.2 կետի "Մասնավոր հատվածի մասնագիտական կարողությունների զարգացում" միջոցառումը, մասնավորապես « Ունենալ ազգային EdTech պլատֆորմ, որի շահառուս կհանդիսանա այդ թվում նաև մասնավոր ոլորտը: Կատարել տարեկան 10.000 վերապատրաստում՝ լայն մարզային բաշխվածությամբ» պարբերությունը:</p>

4. Նպատակը

Ծրագրի նպատակն է զանգվածայնորեն բարելավել առաջադեմ գիտելիքի և հմտությունների մակարդակը Յայաստանում, բարձրացնել աշխատուժի մասնակցության մակարդակն ու աշխատուժի համապատասխանությունը տնտեսության ներկա և ապագա պահանջներին, ավելացնել առաջատար և զարգացող մասնագիտությունների գծով մրցունակ մասնագետների թիվը, նպաստել գործազրկության մակարդակի նվազմանը և ընձեռնել աշխատելու ավելի մեծ հնարավորություններ, հայոց լեզվով հասանելի դարձնել մեծածավալ համաշխարհային առաջադեմ գիտելիք և փորձ, նպաստել ցկյանս կրթության մշակույթի ձևավորմանն ու ամրապնդմանը, բարձրագույն կրթական հաստատությունների կարողությունների ավելացմանը, հանրային ծառայության և հանրային կառավարման որակի բարելավմանը, հայրենադարձության խթանմանը, ներդրումների ծավալի և տնտեսության արտադրողականության աճին՝ ապահովելով հարաձուլ տնտեսական աճի համար անհրաժեշտ նախադրյալներ և տնտեսության մեջ ստեղծելով բազմապատիկ ներգործություն:

5. Նկարագրությունը

Միջոցառման իրականացման արդյունքում՝ տնտեսության զարգացման աջակցող մասնագիտական կարողությունների և հմտությունների զանգվածային վերազինման նպատակով ստեղծվելու է ազգային կրթական Edtech հարթակը, որը իր մեջ ներառելու է աշխարհի առաջատար բուհերի և միջազգային կազմակերպությունների էլեկտրոնային դասընթացները:

6. Մասվող օգուտները

Միջոցառման իրականացումից ակնկալվում են հետևյալ օգուտները՝

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է շուրջ 114 500 սովորողի՝ առնվազն 3 ամսով դասընթացների ամբողջական հասանելիության տրամադրում:

Բացի այս բանական արդյունքից, ծրագրի հաջող իրագործման դեպքում ենթադրվում է բազում այլ որակական փոփոխություններ, որոնց թվում են, մասնավորապես՝

- մեծածավալ համաշխարհային առաջադեմ գիտելիքի՝ հայոց լեզվով հասանելիություն,
- տնտեսության արտադրողականության աճ,
- աշխատաշուկայի պահանջներին ավելի համապատասխան և մրցունակ աշխատուժի,
- գործազրկության մակարդակի նվազում և աշխատուժի մասնակցության մակարդակի աճ,
- կազմակերպություններում աշխատակիցների, ներառյալ ղեկավար կազմի արտաուսքի մակարդակի նվազում և համապատասխան ծախսերի խնայում,
- ապագայի մարտահրավերներին առավել դիմակայուն տնտեսություն,
- ներդրումային ավելի գրավիչ միջավայր,
- արժանիքահեն առաջնադաս մշակույթի ամրապնդում,
- սեփական շարունակական զարգացման մշակույթի ամրապնդում,
- բարձրագույն կրթական համակարգի կարողությունների և մրցունակության աճ,
- պետական և տեղական կառավարման որակի աճ,
- հայրենադարձության ծավալների աճ,
- անցյալից լեզվի և տիրապետողների և անցյալից լեզվի իմացության մակարդակի աճ,
- էլ-ուսուցման հնարավորությունների օգտվողների և դասընթացներն ավարտողների ցուցանիշների զանգվածային աճ,
- ՏՅՏ հմտություններին և թվային գրագիտության ավելի բարձր մակարդակ:

7. Նոր նախաձեռնությունը չֆինանսավորելու դեպքում ծագող խնդիրները

Նոր նախաձեռնությունը չֆինանսավորելու դեպքում ՅՅ կառավարության 2021-2026 թթ. ծրագրով նախատեսված դրույթները, ՅՅ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Ի որոշման հավելված N 1-ով նախատեսված՝ ՓՄՁ ծրագրի 4.2 կետի "Մասնավոր հատվածի մասնագիտական կարողությունների զարգացում" միջոցառումը:

8. Արդյունքային ցուցանիշները	Ծափի միավորը	2023թ.	2024թ.	2025թ.
